«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ Սահմանադրական իրավունք (1-ին կիսամյակ)

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ ի.գ.թ., դասախոս Թորոսյան Ս.Լ.

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Ներածություն

1.1. Տվյալ առարկայի բովանդակության համառոտ նկարագրությունը

Սահմանադրական իրավունքն առանցքային իրավունքի ճյուղերից է: Սահմանադրական իրավունքի կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների կարևորությունն ինքնին կանխորոշում են այս իրավունքի ճյուղի տեղը և դերը իրավագիտությունում: Սահմանադրական իրավունք ուսումնական առարկայի շրջանակներում ուսանողները հնարավորություն են ունենում գիտելիքներ ստանալ պետության կենսագործունեության հիմքում դրված հիմնարար սկզբունքների, պետական կառավարման համակարգի, ինչպես նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին: Ըստ այդմ՝ այս իրավունքի ճյուղի մասին գիտելիքներն անհրաժեշտ են ցանկացած իրավաբանի համար՝ անկախ մասնագիտական կողմնորոշումից: Դա է պատճառը, որ Սահմանադրական իրավունք ուսումնական առարկան դասավանդվում է գրեթե բոլոր բուհերի իրավագիտության ֆակուլտետներում և հանդիսանում է ընդհանուր ուսումնական ծրագրի պարտադիր բաղադրիչներից մեկը:

1.2. Ծավալը ակադեմիական կրեդիտներով և ժամերով

Առարկայի ծավալը՝ 216 ժամ, կրեդիտ՝ «6» ECTS:

1.3. Առարկայի փոխկապակցվածությունը մասնագիտության (ուղղության) ուսումնական պլանի այլ առարկաների հետ

«Սահմանադրական իրավունք» դասընթացը սերտորեն փոխկապակցված է իրավաբանական կրթական ծրագրի մի շարք հիմնարար և ճյուղային առարկաների հետ, մասնավորապես՝ «Պետության և իրավունքի տեսություն», «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք», «Վարչական իրավունք» և այլն:

1.4. Դասընթացի ծրագրի յուրացման արդյունքները

Դասընթացի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

Իմանա.

1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, նորմերը և ինստիտուտները, աղբյուրները, սահմանադրաիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները:
2. Սահմանադրության հասկացությունը, իրավաբանական բնույթը, էությունը, տեսակները և ձևերը:
3. Սահմանադրության բովանդակությունն ու իմաստը:

Կարողանա.

1. Վերլուծել և ճիշտ մեկնաբանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթները:
2. Կիրառել սահմանադրական իրավունքի տեսական գիտելիքները գործնական իրավական իրավիճակների լուծման ընթացքում:

3. Կատարել սահմանադրահիրավական խնդիրների իրավական վերլուծություն, ձևակերպել հիմնավորված իրավական եզրակացություններ:

Ունակ լինի (տիրապետի).

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սահմանադրական օրենքների, սահմանադրական իրավունքի այլ աղբյուրների և Սահմանադրական դատարանի որոշումների քննադատական վերլուծության:
2. Սահմանադրահիրավական հարցերի վերաբերյալ իրավաբանական փաստարկներ ձևակերպելու, տրամաբանորեն հիմնավորված եզրահանգումներ կատարելու, մասնագիտական դիրքորոշումը բանավոր և գրավոր ներկայացնելու, ինչպես նաև իրավական հակափաստարկներ առաջադրելու հմտություններին:
3. Սահմանադրական դրույթների վերաբերյալ տեսական գիտելիքները գործնական իրավական խնդիրների լուծման ընթացքում արդյունավետ կիրառելու հմտություններին:
4. Սահմանադրական նորմերի և ինստիտուտների համեմատական-իրավական վերլուծության, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների սահմանադրական համակարգերի համեմատության, ինչպես նաև սահմանադրական իրավունքի զարգացման արդի միտումները գնահատելու հմտություններին:
5. Ինքնուրույն ուսումնասիրելու սահմանադրահիրավական օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի իրավակիրառ պրակտիկան և գիտական գրականությունը, շարունակաբար զարգացնելու մասնագիտական գիտելիքները:

2. Առարկայական ծրագիրը

2.1. Նպատակը և խնդիրները

Առարկայի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական գիտելիքներ Սահմանադրական իրավունք ուսումնական առարկայի բովանդակության վերաբերյալ:

Առարկայի խնդիրները

Դասընթացի հիմնական խնդիրն է ուսանողներին ներկայացնել Սահմանադրական իրավունքի տեսական դրույթները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության և Սահմանադրական իրավունքի աղբյուր հանդիսացող այլ իրավական ակտերի բովանդակությունը և իմաստը:

2.2. Դասընթացի ծանրաբեռնվածության ծավալը և ուսումնական աշխատանքի ձևերը

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 6 ակադեմիական կրեդիտ (216 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 34 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական

պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**216**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**128**
1.1.1. Դասախոսություններ	**64**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**64**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**34**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք, քննություն**

2.3. Թեմատիկ պլան

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1 Սահմանադրական իրավունքը	4	2	2
Թեմա 2 Սահմանադրությունը	4	2	2
Թեմա 3 Սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը, ընդհանուր նկարագիրը և բովանդակությունը	6	3	3
Թեմա 4 Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների ընդհանուր նկարագիրը և դասակարգումը, առանձին իրավունքների և	40	20	20

ազատությունների բովանդակությունը			
Թեմա 5 Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները	4	2	2
Թեմա 6 Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները և դրանց իրագործումը	2	1	1
Թեմա 7 ՀՀ պետական կառավարման ձևի ընդհանուր նկարագիրը	2	1	1
Թեմա 8 Ազգային ժողովը	12	6	6
Թեմա 9 Հանրապետության նախագահը	10	5	5
Թեմա 10 Կառավարությունը	10	5	5
Թեմա 11 Դատական մարմինները	12	6	6
Թեմա 12 Այլ պետական մարմինները	8	4	4
Թեմա 13 Տեղական ինքնակառավարումը	8	4	4
Թեմա 14 Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն	6	3	3
Ընդամենը	**128**	**64**	**64**

2.4. Դասընթացի բաժինների համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Սահմանադրական իրավունքը

Սույն թեման ներառում է սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, սահմանադրական իրավունքի նորմերը, ինստիտուտները, աղբյուրները, ինչպես նաև սահմանադրաիրավական հարաբերությունները:

Թեմա 2. Սահմանադրությունը

Սույն թեման ներառում է Սահմանադրության հասկացությունը, էությունը, տեսակները, ձևերը, գործառնությունները և գործողությունը:

Թեմա 3. Սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը, ընդհանուր նկարագիրը և բովանդակությունը

Սույն թեման ներառում է սահմանադրական կարգի հասկացությունը, սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը, ընդհանուր նկարագիրը և առանձնահատկությունները, սահմանադրական կարգի հիմունքներում տեղ գտած ոլորտների բովանդակությունը:

Թեմա 4. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների ընդհանուր նկարագիրը և դասակարգումը, առանձին իրավունքների և ազատությունների բովանդակությունը:

Սույն թեման ներառում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հասկացությունը, ընդհանուր նկարագիրը, դասակարգումը և առանձնահատկությունները, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, դրանց տեսակները, բովանդակությունը, նշանակությունը և էությունը:

Թեմա 5. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները

Սույն թեման ներառում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքների հասկացությունը, տեսակները և բովանդակությունը:

Թեմա 6. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները և դրանց իրագործումը

Սույն թեման ներառում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները, դրանց էությունը և բովանդակությունը, դրանց իրագործման մեխանիզմները:

Թեմա 7. ՀՀ պետական կառավարման ձևի ընդհանուր նկարագիրը

Սույն թեման ներառում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ձևի նկարագիրը, պետական մարմինների համակարգը, դրանց

տեղը և դերը պետական համակարգում, դրանց միջև փոխհարաբերությունների բնույթը:

Թեմա 8. Ազգային ժողովը

Սույն թեման ներառում է Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը, կազմավորման կարգը, կառուցվածքը, լիազորությունները, պատգամավորի կարգավիճակը և գործունեության առանձնահատկությունները:

Թեմա 9. Հանրապետության նախագահը

Սույն թեման ներառում է Հանրապետության նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը, ընտրության կարգը, լիազորությունները, դրանց իրականացման առանձնահատկությունները:

Թեմա 10. Կառավարությունը

Սույն թեման ներառում է Կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը, կազմավորման կարգը, կառուցվածքը, լիազորությունները և գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:

Թեմա 11. Դատական մարմինները

Սույն թեման ներառում է դատական իշխանության սահմանադրական հիմունքները, դատարանների համակարգը և լիազորությունները, դատավորների իրավական կարգավիճակը, նշանակման և լիազորությունների դադարման կարգը:

Թեմա 12. Այլ պետական մարմինները

Սույն թեման ներառում է Սահմանադրությամբ նախատեսված այլ պետական մարմինների իրավական կարգավիճակը, կազմավորման կարգը, լիազորությունները և գործունեության առանձնահատկությունները:

Թեմա 13. Տեղական ինքնակառավարումը

Սույն թեման ներառում է տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմունքները, համայնքների իրավական կարգավիճակը, տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը, լիազորությունները և գործունեության առանձնահատկությունները:

Թեմա 14. Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն

Սույն թեման ներառում է Սահմանադրության ընդունման և փոփոխության կարգը, սահմանադրական փոփոխությունների առանձնահատկությունները, ինչպես նաև հանրաքվեի հասկացությունը, նշանակությունը, անցկացման կարգը և սահմանադրաիրավական նշանակությունը:

3. Տեսական բլոկ

3.1. Հիմնական գրականություն՝

1. Ս. Լ. Թորոսյան, ՀՀ Սահմանադրությունը մեկնաբանություններով, Առաջին մաս Եր.: «Հայրապետ» հրատ., 2023-240 էջ:
2. Ս. Լ. Թորոսյան, ՀՀ Սահմանադրությունը մեկնաբանություններով, Երկրորդ մաս/ Եր.: «Հայրապետ» հրատ., 2025-352 էջ:

3.2. Լրացուցիչ գրականություն՝

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, գիրք առաջին | Դասագիրք բուհերի համար, «Տիգրան մեծ» հրատ., գլխ. խմբագիր՝ իրավ. գիտ., դոկ., պրոֆ., Ն.Ա. Այվազյան, Երևան, 2016:
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, գիրք երկրորդ | Դասագիրք բուհերի համար, «Տիգրան մեծ» հրատ., պատ. Խմբագիր՝ իրավ. գիտ., դոկ., պրոֆ., Ն.Ա. Այվազյան, Երևան, 2016:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, 2010
4. Հայաստանի Հանրապետության 2015թ. Սահմանադրությունը, համառոտ պարազաբանումներ, 2016:

3.3. Նորմատիվ իրավական ակտեր՝

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք
3. «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք
4. «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք
5. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք
6. «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք
7. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենք
8. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք

4.Գնահատման միջոցները

4.1. Կարողունակության ցանկը

Սահմանադրական իրավունքի աղբյուրները, նորմերը և ինստիտուտները բացահայտելու, իրավական տեղեկատվությունը հավաքագրելու, համակարգելու և գնահատելու կարողունակությունը ձևավորվում է դասընթացի համապատասխան թեմաների ուսումնասիրման ընթացքում: Այն գնահատվում է սեմինարների, վերլուծական առաջադրանքների և քննարկումների միջոցով:

Սահմանադրական նորմերը մեկնաբանելու, իրավական խնդիրները բացահայտելու և սահմանադրաիրավական հիմնավորված լուծումներ առաջարկելու կարողունակությունը ձևավորվում է դասընթացների համապատասխան թեմաների շրջանակներում: Այն ստուգվում է իրավիճակային խնդիրների և գրավոր աշխատանքների միջոցով:

Սահմանադրական նորմերը գործնական իրավիճակներում կիրառելու և իրավական հիմնավորված եզրակացություններ կատարելու կարողունակությունը ձևավորվում է դասընթացների համապատասխան թեմաների շրջանակներում: Այն ստուգվում է իրավիճակային առաջադրանքների և սեմինարային քննարկումների միջոցով:

Մասնագիտական իրավաբանական լեզուն ճիշտ կիրառելու, սահմանադրաիրավական հարցերի վերաբերյալ հստակ և հիմնավորված բանավոր ու գրավոր դիրքորոշում ներկայացնելու կարողունակությունը ձևավորվում է դասընթացի բոլոր թեմաների շրջանակներում: Այն գնահատվում է բանավոր պատասխանների և քննարկումների միջոցով:

Ինքնուրույն ուսումնասիրելու սահմանադրական օրենսդրության փոփոխությունները, Սահմանադրական դատարանի որոշումները և գիտական գրականությունը, ինչպես նաև շարունակաբար կատարելագործելու մասնագիտական գիտելիքները ձևավորվում է դասընթացի ամբողջ ընթացքում: Այն գնահատվում է ինքնուրույն աշխատանքների, հետազոտական առաջադրանքների և ներկայացումների միջոցով:

4.2. Կարողունակության գնահատման ցուցանիշները և չափանիշները

4.2.1. Վերլուծական կարողություններ

A(88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողը կարողանում է իրականացնել ուսումնասիրվող նյութի համակողմանի վերլուծություն, ներկայացնել և մեկնաբանել հարցի պատասխանը, բացահայտել դրա բովանդակությունը, նշանակությունը և փոխկապակցվածությունը:

B(76–87 միավոր) «Շատ լավ». Ուսանողը ճիշտ է առանձնացնում ուսումնասիրվող նյութի հիմնական կողմերը, կարողանում է ներկայացնել և մեկնաբանել հարցի պատասխանը, ինչպես նաև իրականացնել վերլուծություններ:

C(64–75 միավոր) «Լավ». Ուսանողը տիրապետում է հարցի հիմնական բովանդակությանը, սակայն վերլուծությունը հիմնականում կրում է նկարագրական բնույթ: Թույլ է տալիս որոշակի սխալներ:

D(52–63 միավոր) «Բավարար». Ուսանողը վերարտադրում է հարցի էական մասը, սակայն դժվարանում է իրականացնել ինքնուրույն վերլուծություն և բացահայտել ուսումնասիրվող նյութի էական առանձնահատկությունները:

E(40–51 միավոր) «Բավարար սահմանային». Ուսանողը տալիս է ընդհանուր բնութագիր, սակայն չի կարողանում կատարել համարժեք վերլուծություն և կապակցել ուսումնասիրվող նյութի առանձին տարրերը:

FX(20–39 միավոր) «Անբավարար». Ուսանողը չի կարողանում առանձնացնել ուսումնասիրվող նյութի հիմնական կողմերը, վերլուծական կարողությունները դրսևորված չեն:

F(0–19 միավոր) «Անբավարար». Վերլուծական կարողությունները բացակայում են:

4.2.2. Իրավական փաստարկում

A(88–100 միավոր) «Գերազանց». Փաստարկումը կիրառվում է հարցին համապատասխան, ինչպես նաև կատարվում է հիմնավորված եզրահանգումներ:

B(76–87 միավոր) «Շատ լավ». Փաստարկումը լավն է, կարողանում է հիմնավորել իր տեսակետը, սակայն մի փոքր թերություններով:

C(64–75 միավոր) «Լավ». Փաստարկումը հիմնականում ճիշտ է, սակայն սահմանափակ է, հիմնավորումները ամբողջական չեն:

D(52–63 միավոր) «Բավարար». Փաստարկումը թույլ է, գերակշռում է նյութի ընդհանուր ներկայացումը, հիմնավորումները սահմանափակ են:

E(40–51 միավոր) «Բավարար սահմանային». Փաստարկումը ընդհանուր բնույթ ունի, բացակայում են բավարար հիմնավորումները:

FX(20–39 միավոր) «Անբավարար». Փաստարկումը չի համապատասխանում առաջադրված հարցին:

F(0–19 միավոր) «Անբավարար». Փաստարկումը բացակայում է:

4.2.3. Հստակություն և ընկալելիություն

A(88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը կառուցված է, կիրառվում է ճշգրիտ իրավական տերմիններ: Ուսանողը կարողանում է հստակ ներկայացնել հարցը:

B(76–87 միավոր) «Շատ լավ». Պատասխանը հասկանալի է, թույլ են տրվում միայն առանձին ոչ էական անճշտություններ:

C(64–75 միավոր) «Լավ». Պատասխանը ընդհանուր առմամբ հասկանալի է, սակայն առկա են սխալներ և որոշ հասկացությունների ոչ ճշգրիտ կիրառում:

D(52–63 միավոր) «Բավարար». Պատասխանը սխալ է, ուսանողը դժվարանում է հստակ ձևակերպել և ներկայացնել հարցը:

E(40–51 միավոր) «Բավարար սահմանային». Պատասխանը ոչ հստակ է, կիրառվող հասկացությունները հաճախ սխալ են կամ թերի:

FX(20–39 միավոր) «Անբավարար». Պատասխանը դժվար ընկալելի է, տերմիններ գրեթե չի կիրառվում:

F(0–19 միավոր) «Անբավարար». Պատասխանը բացակայում է:

4.2.4. Համակարգվածություն և կառուցվածքայնություն

A(88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը տրամաբանորեն կառուցված է, առկա է նյութի ներկայացման, վերլուծության և եզրահանգման հստակ հաջորդականություն: Ուսանողը ցուցաբերում է համակարգային մոտեցում ուսումնասիրվող նյութի ներկայացման և գնահատման նկատմամբ:

B(76–87 միավոր) «Շատ լավ». Պատասխանը ընդհանուր առմամբ կառուցված է, հիմնական գաղափարները ներկայացված են տրամաբանական հերթականությամբ, սակայն որոշ հատվածներ կարող են լինել ոչ բավարար մանրամասն:

C(64–75 միավոր) «Լավ». Պատասխանում շարադրանքի կառուցվածքը հիմնականում պահպանված է, սակայն առկա են տրամաբանական բացեր և ոչ ամբողջական եզրահանգումներ:

D(52–63 միավոր) «Բավարար». Պատասխանը չունի հստակ կառուցվածք, գաղափարների միջև կապերը թույլ են արտահայտված, նյութի ներկայացումը ոչ ամբողջական է:

E(40–51 միավոր) «Բավարար սահմանային». Պատասխանում կառուցվածքը հիմնականում բացակայում է, շարադրանքը համակարգված չէ:

FX(20–39 միավոր) «Անբավարար». Պատասխանը չունի տրամաբանական հաջորդականություն:

F(0–19 միավոր) «Անբավարար». Պատասխանում կառուցվածքը բացակայում է:

4.3. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը

4.3.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը

Սեմինար պարապմունքները իրականացվում են բանավոր քննարկումների, ինչպես նաև իրավիճակային խնդիրների լուծմամբ:

4.4.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն)

Ստուգարքը (քննությունը) անցկացվում է գրավոր ձևաչափով: Տոմսի կառուցվածքը ներառում է երկու վերլուծական հարց և մեկ իրավիճակային խնդիր: Կատարման ժամանակը 90 րոպե է:

4.4.3. Գնահատման ընթացակարգը

Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0–100 միավոր սանդղակով: 88–100 միավորի դեպքում տրվում է A (գերազանց), 76–87-ի դեպքում՝ B (շատ լավ), 64–75-ի դեպքում՝ C (լավ), 52–63-ի դեպքում՝ D (բավարար), 40–51-ի դեպքում՝ E (բավարար սահմանային), 20–39-ի դեպքում՝ FX (անբավարար), իսկ 0–19-ի դեպքում՝ F (անբավարար):

Միավորների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ. Վերլուծական երկու հարցերը գնահատվում են մինչև 33 միավոր, իսկ իրավիճակային խնդիրը՝ մինչև 34 միավոր: Հարցերի քանակը և նշված բաշխումը կարող է փոփոխվել:

4.4.4. Գնահատման չափանիշներ

Գնահատելիս հաշվի է առնվում Սահմանադրության նորմերի ճշգրիտ վերլուծությունները:

4.4.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ

Իրավիճակային խնդիրը լուծելիս պետք է հաջորդաբար կիրառել հետևյալ սխեման. փաստեր → իրավական խնդիր → նորմ/դոկտրին → փաստարկում → եզրակացություն:

Ստուգարքի (քննության) ժամանակ խորհուրդ է տրվում հստակ կառուցել պատասխանը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություն, ճիշտ օգտագործել իրավական տերմինաբանությունը, անհրաժեշտության դեպքում հղումներ կատարել ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ օրենքներին:

5. Հարցեր և առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

5.1. Հարցաշար՝

1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը
2. Սահմանադրական իրավունքի նորմերը և ինստիտուտները
3. Սահմանադրահիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները
4. Սահմանադրական իրավունքի աղբյուրները
5. Սահմանադրության հասկացությունը
6. Սահմանադրության իրավաբանական բնույթը
7. Սահմանադրության էությունը
8. Սահմանադրության տեսակները
9. Սահմանադրության ձևերը
10. Սահմանադրության գործառնությունները
11. Սահմանադրության գործողությունը
12. Սահմանադրության նախաբանը
13. Սահմանադրական կարգի հիմունքները
14. Պետության բնութագրիչները
15. Իշխանության պատկանելը ժողովրդին
16. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները
17. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը
18. Իրավական նորմերի աստիճանակարգությունը
19. Օրինականության սկզբունքը
20. Ընտրական իրավունքի սկզբունքները

21. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը
22. Տեղական ինքնակառավարման երաշխավորումը
23. Սեփականության երաշխավորումը
24. Տնտեսական կարգը
25. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը
26. Արտաքին քաղաքականությունը
27. Զինված ուժերը և պաշտպանությունը
28. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը
29. Ընտանիքի պաշտպանությունը
30. Պետությունը և կրոնական կազմակերպությունները
31. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին
32. Հայկական սփյուռքի հետ կապերը
33. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, խորհրդանիշերը, մայրաքաղաքը
34. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները
35. Մարդու արժանապատվությունը
36. Կյանքի իրավունքը
37. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը
38. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը
39. Անձնական ազատությունը
40. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը
41. Խտրականության արգելքը
42. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը
43. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը
44. Բնակարանի անձեռնմխելիությունը
45. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը
46. Անձնական տվյալների պաշտպանությունը
47. Ամուսնանալու ազատությունը
48. Ծնողների իրավունքները և պարտականությունները
49. Երեխայի իրավունքները
50. Կրթության իրավունքը
51. Մարդու ազատ գործելու իրավունքը
52. Ազատ տեղաշարժվելու իրավունքը
53. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը
54. Կարծիքի արտահայտման ազատությունը
55. Ստեղծագործության ազատությունը
56. Հավաքների ազատությունը
57. Միավորումների ազատությունը

58. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը
59. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը
60. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը
61. Հանրային ծառայության անցնելու իրավունքը
62. Պատշաճ վարչարարության իրավունքը
63. Տեղեկություններ ստանալու իրավունքը
64. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը
65. Հանրագիր ներկայացնելու իրավունքը
66. Քաղաքական ապաստանի իրավունքը
67. Արտաքսման կամ հանձնման արգելքը
68. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը
69. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները
70. Գործադուլի իրավունքը
71. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը
72. Սեփականության իրավունքը
73. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը
74. Վնասի հատուցման իրավունքը
75. Արդար դատաքննության իրավունքը
76. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը
77. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը
78. Անմեղության կանխավարկածը
79. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը
80. Կրկին դատվելու արգելքը
81. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը
82. Ներման խնդրանքի իրավունքը
83. Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը
84. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը
85. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը
86. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ
87. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը
88. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ
89. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը
90. Համաչափության սկզբունքը
91. Որոշակիության սկզբունքը
92. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

93. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան
94. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները
95. Աշխատանքային պայմանները
96. Սոցիալական ապահովությունը
97. Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը
98. Առողջության պահպանությունը
99. Պետության քաղաքականության հիմնական նպատակները և դրանց իրագործումը
100. Ազգային ժողովը
101. Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները
102. Ազգային ժողովի կազմը և ընտրության կարգը
103. Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը
104. Ազգային ժողովի հերթական ընտրությունը
105. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունը
106. Ազգային ժողովի ընտրությունների նշանակումը
107. Ներկայացուցչական մանդատը
108. Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունը
109. Պատգամավորի անձեռնմխելիությունը
110. Պատգամավորի վարձատրության չափը և գործունեության այլ երաշխիքները
111. Պատգամավորի լիազորությունների դադարումը և դադարեցումը
112. Ազգային ժողովի հերթական նստաշրջանները
113. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը և նիստը
114. Ազգային ժողովի նիստերի հրապարակայնությունը
115. Ազգային ժողովի նիստերի իրավազորությունը
116. Օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունումը
117. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները և Ազգային ժողովի խորհուրդը
118. Ազգային ժողովի խմբակցությունները
119. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները
120. Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովները
121. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովները
122. Օրենսդրական նախաձեռնությունը
123. Պետական բյուջեի ընդունումը
124. Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը
125. Պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը
126. Հարցապնդումները
127. Հրատապ թեմայով քննարկումները
128. Վարչապետին անվստահություն հայտնելը
129. Միջազգային պայմանագրեր վավերացնելը, կասեցնելը և չեղյալ հայտարարելը

130. Համաներումը
131. Պատերազմի հայտարարումը և խաղաղության հաստատումը
132. Ռազմական դրությունը
133. Արտակարգ դրությունը
134. Վարչատարածքային միավորները և բաժանումը
135. Ինքնավար մարմինները
136. Հանրապետության նախագահը
137. Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները
138. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացնող պահանջները
139. Հանրապետության նախագահի ընտրության կարգը
140. Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունը
141. Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը
142. Հանրապետության նախագահի ուղերձը
143. Օրենքի ստորագրումը և հրապարակումը
144. Կառավարության հրաժարականի ընդունումը
145. Փոփոխություններ Կառավարության կազմում
146. Հանրապետության նախագահի լիազորություններն արտաքին քաղաքականության բնագավառում
147. Հանրապետության նախագահի լիազորությունները զինված ուժերի բնագավառում
148. Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը
149. Ներում շնորհելը
150. Պարգևատրումը և պատվավոր կոչումների շնորհումը
151. Բարձրագույն դասային աստիճանների շնորհումը
152. Պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը
153. Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները
154. Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը
155. Հանրապետության նախագահի պաշտոնանկությունը
156. Հանրապետության նախագահի հրաժարականը
157. Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինությունը
158. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամանակավոր կատարումը
159. Հանրապետության նախագահի գործունեության ապահովումը
160. Կառավարությունը
161. Կառավարության կարգավիճակը և գործառույթները
162. Կառավարության կազմը և կառուցվածքը
163. Կառավարության անդամին ներկայացվող պահանջները
164. Վարչապետի ընտրությունը և նշանակումը
165. Կառավարության կազմավորումը
166. Կառավարության ծրագիրը

167. Վարչապետի և Կառավարության մյուս անդամների իրավասությունները
168. Կառավարության նիստերը և որոշումները
169. Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը
170. Զինված ուժերը
171. Կառավարության տարեկան զեկույցն Ազգային ժողովին
172. Կառավարության վստահության հարցը
173. Կառավարության հրաժարականը
174. Պետական կառավարման համակարգի մարմինները
175. Կառավարության տարածքային քաղաքականության իրագործումը
176. Հանրային խորհուրդը
177. Դատարանները և բարձրագույն դատական խորհուրդը
178. Արդարադատության իրականացումը
179. Դատարանները
180. Դատավորի կարգավիճակը
181. Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները
182. Դատավորների ընտրության և նշանակման կարգը
183. Սահմանադրական դատարանը
184. Սահմանադրական դատարանի լիազորությունները
185. Սահմանադրական դատարան դիմելը
186. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները
187. Վճռաբեկ դատարանը
188. Վերաքննիչ դատարանները
189. Բարձրագույն դատական խորհուրդը
190. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը
191. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները
192. Դատախազությունը և քննչական մարմինները
193. Դատախազությունը
194. Գլխավոր դատախազը
195. Քննչական մարմինները
196. Տեղական ինքնակառավարումը
197. Տեղական ինքնակառավարման իրավունքը
198. Համայնքը
199. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները
200. Համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները
201. Համայնքի գործերի կառավարման անմիջական մասնակցությունը
202. Համայնքի սեփականությունը
203. Համայնքի բյուջեն, տեղական հարկերը, տուրքերը և վճարները
204. Համայնքի ֆինանսավորումը
205. Տեղական ինքնակառավարումը Երևանում
206. Իրավական և մասնագիտական հսկողությունը
207. Միջհամայնքային միավորումները

208. Համայնքների միավորումը և բաժանումը
209. Մարդու իրավունքների պաշտպանը
210. Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները և լիազորությունները
211. Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը
212. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները
213. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը
214. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթները, լիազորությունները և ընտրական հանձնաժողովների համակարգը
215. Կենտրոնական ընտրական հանձնաժողովների կազմը և կազմավորման կարգը
216. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը
217. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները
218. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը
219. Հաշվեքննիչ պալատը
220. Հաշվեքննիչ պալատի գործառույթները և լիազորությունները
221. Հաշվեքննիչ պալատի կազմը և կազմավորման կարգը
222. Կենտրոնական բանկը
223. Կենտրոնական բանկի հիմնական նպատակները և գործառույթները
224. Կենտրոնական բանկի նախագահը և խորհուրդը
225. Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն
226. Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը
227. Սահմանադրության անփոփոխելի հոդվածները
228. Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հանրաքվեն
229. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և տարածքի փոփոխության հարցերով հանրաքվեները
230. Հանրաքվեի նշանակումը
231. Հանրաքվեի դրված ակտի ընդունումը
232. Հանրաքվեի անցկացնելու արգելքը